

ՀԱՆԳԻՍ ԳԵՐՇ. Տ. ԳՆԷԼ ԱՐԶ. ՃԵՐԷՃԵԱՆԻ 1915-2001

Ցաւով կ'արձանագրեմք մահը Դամասկոսի Առաջնորդական Տեղապահ Գնէլ Արք. Ճերէնեանի: Ուրբաթ, Օգոստոսի 31ին, ինչպէս նաեւ օր մը առաջ հոգեւոյս Սրբազանին մարմինն Ս. Սարգիս Եկեղեցին փոխադրութեան առիթով, ներկայ եղող բազմութիւնը կը ներկայացնէր ոչ միայն տեղի հայութիւնը, այլ մեծաթիւ պատուիրակութիւններ, որոնք եկած էին յատկապէս Պէյրութէն, Հալէպէն, Հոմսէն եւ Սուրիական այլ գաղութներէ:

Ուրբաթ առաւօտեան օծման, յուղարկութեան եւ թաղման արարողութեանց նախագահեց եւ դամբանականով իր վշտակցութիւնը յայտնեց Տ. Ներսէս Արք. Պօղոսյան (իբրեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատուիրակ), առընթերակայութեամբ Տ. Տարօն Եպս. Ճերէնեանի, քահանայից եւ սարկաւագաց դասերուն: Այնուհետեւ, Սրբազան Հայրը ընթերցեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի ցաւակցագիրքերը:

Եկեղեցական արարողութեանց ներկայ հասարակութեան մէջ էին բոլոր եկեղեցիներու հովուապետներ, Սուրիոյ մօտ Հայաստանի դեսպան Լեւոն Սարգիսեան, օտար դեսպաններ, իրանաճեման խորհրդարարնի հայ անդամներ, Ս.Դ.Հ.Կ.ի, Հ.Բ.Ը.Մ.ի, Հ.Ն.Մ.ի, Հ.Մ.Մ.ի ղեկավար մարմիններ, դամասկահայ, հալէպահայ եւ իրանաճեման միութիւններու ներկայացուցիչներ եւ պաշտօնական անձնավորութիւններ:

Յաւարտ եկեղեցական արարողութեանց ցաւակցութիւնները ընդունուեցան Առաջնորդարանի դահլիճին մէջ եւ Ազգային Թարգմանչաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեհաշ:

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Գնէլ Արք. Ճերէնեան ծնած է 1915ին, Ատանայի մէջ: Հազիւ 13 տարեկան, մուտք կը գործէ Նրուսադէմի Ժառանգաւորացը եւ 1934ին կը ձեռնադրուի սարկաւագ: Ապա, 1937ին կ'ընդունի կուսակրօնութեան ուխտ արեղայանալով: 1941ին Անթիլիասի մէջ կը ստանայ վարդապետական, իսկ 1946ին ծայրագոյնութեան աստիճանները: 1958ին եպիկոպոս կը ձեռնադրուի Էջմիածնի մէջ: 1963ին կը ստանայ Արքութեան աստիճան:

1967էն Գնէլ Սրբազան դարձաւ ՀԿԲՄի Պատուոյ նախագահ, երբ իր նախաձեռնութեամբ արդիականացաւ իրանաճեման հնագոյն դպրոցներէն՝ Սահակեան Վարժարանը:

1943ին կը նշանակուի Պէյրութի Հանքն Թաղամասին Ս. Գեորգ Եկեղեցոյ քարոզիչ, եւ շուրջ 10 տարի շարունակ կը վարէ Դամասկոսի Թեմի Առաջնորդական Տեղապահի պարտականութիւնը:

Տէր Յիսուս ի լոյս երեսաց իւրոց հանգուցէ գեոգի պաշտօնէի իւրոյ:
Յաւիտեանական հանգիստ եւ խաղաղութիւն իր հոգիին: